

• ԳՐԱԽՈՍԱԿԱՆ •

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ ՎԱՆՈՒՑ
Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԵՒ Ս. ԴԱՆԻԵԼԻ Ի ԿԵ-
ՍԱՐԻԱ: Կազմեց Տրդատ Եսայ. Պալեան:
Թղթակազմ, Բառաձայ, էջ 88: Տրպ-
ուած Վիեննա 1963, Միսիթաքեան տը-
պարան:

Մեղուաջան Տրդատ Եսայիսի Պա-
լեանի շնորհիվ՝ ահա զաղարար մը ու-
նինք Կեսարիոյ Ս. Կարապետ եւ Ս. Դա-
նիէլ վանքերու ձեռագիրներուն մասին,
որոնք Մեծ Եղեռնին՝ Կեսարիոյ հայու-
թեան պէս ցիր ու ցան եղան կամ բնա-
ջնջուեցան, աւելցնելով թիւը մեր թան-
կազին կորուստներուն:

Դժուար է հաւատալ որ միայն այս ցու-
ցակագրուած 48 ձեռագիրները կը դանը-
ւէին Կեսարիոյ այս երկու նշանաւոր վան-
քերուն հաւաքմանց մէջ: Այս 48 գրչա-
գիրներուն 25 հատն ալ ԺԸ. եւ ԺԹ. դա-
րերու ձեռագիրներ են:

Ինծի համար խիստ շահեկան ձեռագիր
մըն է թիւ 35ը, Գէորգայ Լամբրոնացւոյ՝
Մեկնութիւն Գործոց Առաքելոց, իր գըր-
չին յիշատակարանին համար: Յիշատա-
կարանին մէջ կը յիշուի Յոհանէս Եգնկա-
յեցի մը, որ սակայն խնդիր է թէ նո՞յնն
է Պիուլին հետ: Այլուր այս մասին պիտի
խօսիմ:

Կեսարիոյ այս հաւաքածոն ունի յիշա-
տակարանով եւ պարունակութեամբ շա-
հեկան գրչագիրներ. սակայն չկան գեղ-
արուեստական արժէքով կարեւորներ, ո-
րոնք բնական է կ'ակնկալուէին որ գրո-
նուէին Կեսարիոյ նման հարուստ հա-
մայնքի մը վանքերու պատկանելի հա-
ւաքածոներուն մէջ:

Ա. Ալոյսյանեան (Պատ. Կեսարիոյ, էջ
1837) խօսք կ'ընէ «Ս. Կարապետի Մայ-
րափանքի աւելի քան հարիւր վաթսուն
ձեռագիրներու» մասին, որոնց ցուցակը
կազմեր է Տրդատ Եսայ. Պալեան, եւ սա-
կայն հազիւ այս 44 ցուցակագրեալները

փրկուեր են, ցուցակագրէն Վիեննա գըր-
կուած ըլլալով: Մնացեալ 116ին ցուցա-
կագրութեանց ինչ ըլլալուն մասին բան
մը չենք գիտեր զժրատարար: Արդեօք
միայն 44ը կարեւոր նկատած էր Պալեան
Սրբազան՝ հրատարակութեան համար, եւ
այդքանով բաւականացած է: Դժուար է
է ըսել, առ ի չգոյէ ուրիշ համառօտ կամ
ընդարձակ ցուցակի:

Հնագոյնը 1203 թուականին գրուած Ա-
ւետարան մըն է, որուն գրչութեան վայրն
է Դրազարիկի վանքը, Կիլիկիա: Հաւաք-
ման մէջ է 1342ին Կարին գրուած Աս-
տուածաշունչ մը, Հայ-Հռոմէական-
ներէ գործածուած եւ խիստ շահեկան:
Հաւաքման մէջ կայ 10 Աւետարան, 3
Յայտմաւորք եւ 2 ծառոց:

Թիւ 2 ձեռագիրը, Մեկնութիւն Թղթոց-
Կաթողիկեայց, նշանակուած է 1381էն ա-
ռաջ, եւ ՏԵՂԻՆ անձանթ: Թիւ 3 յի-
շատակարանին մէջ, սակայն, կ'ակնար-
կուի վայրին մասին. «Ստեփաննոս կրօ-
նաւոր Տաւկեցի որ բազում աշխատեցաւ
եւ դամենայն եղբայրութիւն տանա Հռո-
մա քահանայք եւ կրօնաւորք...»: Ասիկա
ինծի ենթադրել կու տայ որ գրչութեան
տեղը Հռոմ էր:

Կեսարիոյ զանազան հաստատութիւն-
ներէ ձեռագիրներ բերուած եւ վաճառ-
ուած են Պոլիս, եւ այդ միջոցաւ իմ հա-
ւաքածոյիս ալ մաս կազմած են ինչ ինչ
ձեռագիրներ: Սակայն ներկայիս դեռ կա-
րելի չէ բան մը ըսել՝ Կեսարիոյ ձեռա-
գիրներուն մեծագոյն մասին փճացած
կամ փրկուած ըլլալուն մասին:

Մենք սրտանց երախտապարտ ենք հան-
դուցեալ Տրդատ Եսայ. Պալեանի՝ որ դռնէ
Ս. Կարապետի վանքին 160էն աւելի ձե-
ռագիրներուն այս 44 հատը ցուցակա-
գրելով՝ հայկական բանասիրութեան
մատչելի ըրեր է: Շնորհակալութիւն Վի-
եննայի Միսիթաքեան Հայրերուն, որ տը-
պագրութեամբ հանրամատչելի կ'ընեն
այդ թանկագին ցուցակը, որուն կը սպա-
սէինք երկար ժամանակէ ի վեր:

Յ. ԲԻԻՐՏԵԱՆ

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ ՄԵԻԹԱ-
ՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ Ի ՎԻԵՆՆԱ:
Կազմեց Հ. Համազասպ Ոսկեան: Վիեն-
նա, 1963: Թղթակազմ, Բառաձայ, էջ
1156:

Վիեննայի Միսիթաքեան Հայրերու ձե-
ռագիրներու ցուցակին երկրորդ հատորն
է, որ լոյս տեսաւ 1963ին, Կիւլպէնկեան
Հիմնարկութեան նպաստով: Առաջին հա-
տորը հրատարակած է Հ. Յակոբոս Տա-
շեան. դորձ մը, որ ինք իր մէջ կատար-
եալ եւ աննախընթաց, օրինակ հանդիսա-
ցաւ իրմէ վերջ եկող ցուցակներուն. եւ
ահա նոյնին շարունակութիւնը, որ երե-
ւան ելաւ Հ. Համազասպ Ոսկեանի տքնա-
ջան աշխատասիրութեամբ:

Հ. Համազասպ Ոսկեան վաստակաւոր
ու բազմաճմուռ վանական մըն է, որ
խղճամիտ հաւատարմութեամբ կազմած է
այս մեծածաւալ ցուցակը, քալելով Տա-
շեանի լուսաւոր հետքերէն:

Նախորդ հատորը ունէր 573 ձեռագիր-
ներու նկարագրութիւնը. այս երկրորդ
հատորը կը պարունակէ 731 ձեռագիրներ.
այսպէս, մատչելի կ'ըլլան գիտական աշ-
խարհին՝ Վիեննայի Միսիթաքեան Հայրե-
րու 1304 ձեռագիրները: Հոս կ'արժէ
մատնանշել յարգելի միաբաններուն փոյ-
թըն ու մեղուաջան աշխատանքը, որ քիչ
ժամանակուան մէջ հաւաքած են այսքան
ձեռագիրներ ի վին ամէն զոհողութեան.
եւ, ինչպէս կ'իմանանք իւրաքանչիւր ձե-
ռագրի տակ տրուած տեղեկութիւններէն,
անոնցմէ շատերը գտնուած են, կամ համ-
բերութեամբ օրինակուած՝ վանքին միա-
բաններէն. նման արդիւնաշատ գործի մը
առջեւ՝ ամէն հայ պէտք է երախտապարտ
զգայ ինքզինք:

Անշուշտ այսքան մեծ զի գործի մէջ ան-
խուսափելի են վրիպակներ, եւ նոյն ինքն
հեղինակը համեստութեամբ կը խոստո-
վանի «Դիտողութիւններ եւ ճշտումներ»
վերնագրին տակ, հետեւեալ խօսքերով.
«Աննպաստ պարագաներու հետեւանքով՝
ձեռագրաց այս ցուցակին մէջ սխալներ
սպրկած են. զայն գործածողներէն կը

խնդրուի բառերու տառասխալները նե-
րողամտութեամբ ուղղել...» (էջ 1099):
Ցուցակագրուած 731 ձեռագիրներէն
198 հատը Թ-Ժ դարէն մինչեւ ԺԷ. դարու
կը պատկանին. մնացած 533ը՝ 1703-1917
թուականներէն են: Մեր համեատ կարծի-
քով, այս 533 ձեռագիրներէն բաւական
մեծ թիւով մը կարելի էր զանց ընել ցու-
ցակագրելէ, մանաւանդ անոնք որ աւելի
գիտական բնոյթ եւ արժէք ունին. այս-
պէս թիւ 718 ձեռագիրը, որ 1907ին քաղ-
ուած է վանքին ժամանակագրութենէն.
նմանապէս տեսական ու բարոյական աս-
տուածաբանութեան շատ մը դասագրքեր,
որոնք ԺԹ. դարուն թարգմանուած են
եւրոպական գրքերէ ու ծառայած են վա-
նական դասաւանդութիւններու, եւ ազ-
գային մասնաւոր կերպով արժէք մը չեն
ներկայացներ:

Եթէ ներելի ըլլայ մեզի՝ նկատողու-
թիւն մը եւս կատարել, պիտի համարձա-
կինք մատնանշել թէ այս մեծածաւալ հա-
տորին մէջ, երբեմն կը պակսի նոյնաձե-
ւութիւնը: Սովորութիւն է որ ձեռագիր-
ները ցանկուին իրենց օրինակութեան թը-
ւականով, եւ ոչ թէ օրինակութեան նա-
խագաղափարին թուականով, ինչպէս
սրտահամ է թիւ 745 ձեռագրին, որ օ-
րինակուած է 1909ին, եւ նշանակուած է
նախագաղափարի թուականը՝ 1605-1629.
բայց գրքին ետեւ, համեմատական ցու-
ցակներուն մէջ նշանակուած է 1909: Ու-
րիշ անգամներ նշանակուած են երկու
թուականներն ալ, որ աւելի ճշգրիտ է,
այսպէս թիւ 1050, 1249:

Թիւ 892 գրչագիրը իբր թուական կը
կրէ 1911, որու նախագաղափարը 1334
թուականէն է. համեմատական ցուցակին
մէջ նշանակուած է իբր 1334ի ձեռագիր,
ինչ որ նոյնպէս ճիշտ չի թուի մեզի:

Դարձեալ նոյնաձեւութեան համար՝
լուսագոյն պիտի ըլլար ձեռագիրները
ցանկել միշտ թղթահամարով, եւ ոչ թէ
էջահամարով, ինչպէս եղած են թիւ 714,
715, 724-8, 854-8 եւն.:

Թիւ 600 Մաշտոցը, իւրաքանչիւր կա-
նոնի եւ Գանձի համար առանձին թիւ ու

համար ունի, մինչ քիչ ետք՝ թիւ 1001 Մաշտոցը, առանց զանազանութեան եւ նոր համարներու, կը շարքէ իրարու ետեւէ կանոններն ու Գանձերը:

Տպագրութեան ատեն շատ անգամներ մոռցուած են չափերները բանալ կամ դոցել, ինչպէս օր. էջ 3ա, 449բ, 451բ, 938բ եւն: էջ 17բ ամբողջ սիւնակը մնացած է առանց չափերներու:

Այս աննշան դիտողութիւններով հանդերձ, հատորը չի դադարիր անշուշտ կոթողային դործ մը ըլլալէ. լիով դիտակից ենք՝ թէ որքան դժուարին է նման դործ մը լոյս ընծայել, որով մեծապէս կը դընահատենք Հ. Ոսկեանի հսկայ աշխատանքը:

Հատորին վերջին 216 էջերը կը զբաղեն զանազան ցանկերը. ըստ բովանդակութեան, ըստ հին եւ նոր թուակարգութեան, ըստ հնութեան, ըստ ցուցակի, հուսկ՝ տեղանուններու եւ անձնանուններու ցանկեր. եւ ամէնէն ետք՝ համառոտ ցուցակ մը բոլորին՝ դերմաներէն լեզուով: Մասնաւոր զնահատանքի ու շնորհաւորութեան արժանի է Մեծ. Հեղինակը, ցանկազրական այս ճոխ բաժինին համար:

Առողջութիւն ու երկար կեանք մաղթելով բարձրագին Հեղինակին, կը յուսանք որ յաջորդաբար հրատարակէ նման արժէքաւոր հատորներ:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

* * *

THE DAWN OF EUROPEAN CIVILIZATION: Խմբագրեց՝ David Talbot Rice. անգլիացի 13 պատմաբաններու եւ Փրոֆ. Սիրարփի Տէր-Ներսէսեանի գործակցութեամբ: Տպագրութիւն՝ Mc Graw-Hill Book Co. Inc. New York, Toronto, London, 1965. 360 երկսիւնակ մեծադիր էջեր, 26×34 սանթիմէր էջի ծաւալ. 675 պատկերներ, որոնցմէ 200ը գունատիպ, 475 նկարներ, գծագրութիւններ, քարտէսներ եւ ազգագրական տախտակներ: Գին՝ \$ 28.50:

Այս հոյակապ դործը, որ եւրոպական քաղաքակրթութեան արշալոյսը կը ներկայացնէ, իր խմբը ստացած է զլիսաւորաբար տասը ժողովուրդներէն: Անոնց մէջ իր արժանաւոր տեղն են դրած հայ ժողովուրդի քաղաքակրթական եւ մշակութային արժէքները միջնադարեան այն շրջանին, որ կը կանխէ եւրոպական քաղաքակրթութեան արշալոյսի խմբումը: Գիրքը կը բաղկանայ 15 գլուխներէ: Ներածականին մէջ, խմբագիրը իր քննութեան առարկայ կ'ընէ The Myth of «Dark Ages» նիւթը (խաւար դարերու առասպելը): Բ. Գլուխը՝ Սասանեան Պարսկաստանի ծագումը եւ Անկումը (24 էջեր): Գ. Գլուխը՝ Մարգարէին կայսրութիւնը կամ Խալամը եւ արաբական յաղթանակի յորձանքը (24 էջեր): Դ. Գլուխը՝ Արեւելի եւ Արեւմուտի միջեւ կամ Հայաստան եւ իր բաժանեալ պատմութիւնը (20 էջեր): Ե. Գլուխը՝ Հռոմի ժառանգորդը կամ Բիզանդիոն՝ Յուստինիանոսէն մինչեւ Թէոփիլոս (30 էջեր): Զ. Գլուխը՝ Բիստոնիւթեան միջնաբերդը կամ Բիզանդական կայսրութեան 9րդ եւ 10րդ դարերը (26 էջեր): Վերի գլուխները արուած են Արեւելի եւ յետոյ՝ Բիզանդիոն գլխաւոր մասերու մէջ, որոնց կը յաջորդէ՝ Գաղականութիւն եւ տեղաւորում գլխաւոր բաժանումը, հետեւեալ գլուխներով. Է. Գլուխ՝ Ժողովուրդներու հալոցը կամ Արեւելեան եւրոպա եւ Սլաւներու ծագումը (18 էջեր): Ը. Գլուխ՝ Գերմանական Խալիա կամ Ոստրական եւ Լոմպարտ քաղաքութիւնները (18 էջեր): Թ. Գլուխ՝ Աշխարհի ծայրամասերը կամ Սպանիա վիզիգոթներու եւ Արարներու ներքեւ (22 էջեր): Ժ. Գլուխ՝ Նախալուս կայսրութեան կամ Ֆրանկեան քաղաքութիւն Մերովինկ եւ Կարտէն մինչեւ Պեպինոս (22 էջեր): ԺԱ. Գլուխ՝ Կորովի հիւսիսէն կամ Նորսերը եւ իրենց նախակարապետները (22 էջեր): ԺԲ. Գլուխ՝ Յանկացուած կղզիներ կամ Կելտեր եւ Անգլոսաքսոններ (28 էջեր): ԺԳ. Գլուխը կը սկսի Նոր եւրոպա բաժանմունքի մեծութիւնը՝ իրրեւ: Մեծ Արքան կամ

Մեծն Կարոլոս եւ Կարոլինեան յառաջացումներ (30 էջեր): ԺԴ. Գլուխ՝ Կարոլոսի ետք կամ Կայսրութիւնը Որոնեաններու ներքեւ (28 էջեր): ԺԵ. Գլուխ՝ Բիստոնիւթեան մտապատկերը կամ եւրոպայի կերպարանաւորումը (17 էջեր):

Այն գլուխը, որ յատկացուած է Հայոց մասնակցութեան՝ խմբելու եւրոպական քաղաքակրթութեան արշալոյսը, աշխատասիրուած է Փրոֆ. Սիրարփի Տէր-Ներսէսեանի կողմէ: Առաջին էջի գաղաթը կը զբաղէ Հայաստանի քարտէսը եւ կը նշուին այն կեդրոնները, ուր հայ քաղաքակրթական տարրեր ծագել են: «Հայաստան ստուերն էր», վերնագիրով սկսելով, փրոֆեսորը կը շարունակէ «այն մեծ ազգին որ կարող էր» (մեծ ազգ մը ըլլալ): «7րդ եւ 11րդ դարերու ընթացքին նա աղբիւրն է յառաջնադարումներու, որոնց նշանակութիւնը միայն վերջերս լիովին իրականութիւն կը դառնայ՝ Աստուածաբանութեան, Թիսակատարութեան, Ուսումի, Գիտութեան, Գեղարուեստի եւ գուցէ բարձրագոյն քաղաքակրթութեան մէջ: Սակայն, իր աշխարհագրական դիրքը, որ հանդիսացաւ հանդիպման կէտ բազում ազդեցութիւններու եւ գաղափարներու, դատապարտեց զինք մարգագաւտ ըլլալու Ասիոյ եւ եւրոպայի միջեւ, զանալով իրեն կատարելապէս ծաղկելու առիթը՝ որուն այնքան ատակ էր, եւ պարտուելու, բաժանուելու, հարստահարուելու եւ ի վերջոյ բնաջնջուելու»: Ճիշտ այս էջին դիմացի ամբողջ էջը զբաղած է Աղթամար վանքին որմաքանդակ մը, Կոյս Մարիամ գահին վրայ եւ Յիսուս Մանուկը իր ձախ գրկին: Յաջորդ էջերուն վրայ բազմեր են նուրբ նկար մը Վարդանանց պատերազմի, Անիի Մայր տաճարի անկէ ետք՝ կախարչական մէկ դռնաւոր պատկերը Մեծն ու փոքր Արարատներու, եւ վարը Աղթամարի նկարը՝ Անիի Մայր տաճարի նկարին քովը, կարծես երկու զեղարուեստի հսկաներ ժամադրութիւն սարքած են դիտելու զալիք դարերը: Յաջորդ երկու

էջերը զբաղած են Ս. Էջմիածնի եւ Գրիգոր Լուսաւորիչի, Աշոտ Ա. թագաւորի, Կարսի տաճարի, Ս. Փրկիչ եկեղեցիի (Անի) եւ Գալիկ թագաւորի քանդակները եւ նկարները:

Այս բաժնի զբաւոր մասը՝ Հայաստանի մէջ շրիստոնէութեան պետականորէն մուտքէն մինչեւ 11րդ դար կամ Սելճուկեան արշաւանքները: Հոս նկատի կ'առնուին՝ Հայաստան պարսկական իշխանութեան ներքեւ, եւ հայ Ա. Բ. Գ. Ի փոքրագիր եւ զլիսագիր տառերը եւ անոնց լատին համադր տառերը, «Ուսուցանել, գրել եւ թարգմանել» վերնագրով բաժին մը, Աստուածբանութիւն եւ վերականգնութիւն, Արարական արշաւը, երկու դարերու խաւարը, «Իշխան իշխանաց» եւ «Թագաւոր թագաւորաց», Հայկական Ոսկեգարը, Հարստութիւն, Ճարտարարուեստ եւ Առեւտուր, Վարպետ նկարիչներ եւ անբաղկատելի զգրները (զրազրեր), եւ Սելճուկեան յաղթանակ Ծրջանի մը վերջակէտը: Այս ենթադրութիւններու տակ կը ներկայացուին հայ քաղաքակրթական տարրերը: Այս էջերու վրայ կը տրուին Զուարթնոցի եռալարի յատակադիւր, Մծիխթայի մերձ՝ Ս. Խաչ. եկեղեցիի յատակադիւր՝ քառակուսի եւ քառադմբէթ, Գալիկ թագաւորի կիսանդրին, Անիի սահմանադիւր (185 արտավար տարածութիւնով), Անիի Հովուի մատուռի արտադիւր նկարը, Անիի տաճարի յատակադիւր, սպառազինեալ յաղթանգամ հայ մարտիկի մը նկարը, Աշոտ Գ. Ի երկու որդիներու արձանները՝ կանգնած Հազարաթի եկեղեցիի աջն ու ձախը, եւ այլ դարաշինակներ:

Ամերիկացի Փրոֆ. Գոսին զբախտելով Հայոց բաժնի մասին՝ կը գրէ. «Քնդհանրապէս Արեւմուտքի մէջ նուազ ծանօթ է Հայոց եւ Սլաւներու պատմական դերերուն կարեւորութիւնը»: Մասնաւորելով իր խօսքը Հայոց դերի մասին, նա կը գրէ. «Հայերը, որոնք թիւով փոքր են, նստած Բիզանդական եւ Արեւելեան կայսրութիւններու միջեւ, վայելեցին առեւտրական առաւելութիւններ անոնց հետ, եւ